# ՏԵՂԵԿԱՆՔ

**«Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին» Համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության մասին**

Գիտակցելով, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառությունն եւ դրանց չարաշահումը լուրջ վտանգ են ներկայացնում պետության ազգային անվտանգությանը, ժողովրդի առողջությանն ու բարեկեցությանը, ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից-պետությունների թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, եւ դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին 2000 թվականի նոյեմբերի 30-ի Համաձայնագրի եւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից-պետությունների թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառության հակազդման Հայեցակարգի նպատակներից, ընդունելով, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառության դեմ արդյունավետ հակազդեցությունը պահանջում է Կողմերի տեղեկատվական համագործակցության ամրապնդում.

Համաձայնագրի ստորագրումը հնարավորություն կընձեռի.

-սահմանել Կողմերի տարածքներում անօրինական շրջանառությունից առգրավված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգը,

-իրականացնել Կողմերի տարածքներում օպերատիվ-հետախուզական միջոցառումների, հետաքննության, քննչական գործողությունների անցկացման ընթացքում առգրավված թմրանյութերի հանձնման համակարգում եւ փոխգործակցում,

-կարգավորել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների նմուշների տեղափոխումը սույն Համաձայնագրի մասնակից-պետությունների պետական սահմանների վրայով,

-ստեղծել պայմաններ տեղեկատվության օպերատիվ փոխանակման համար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում Համաձայնագրի ստորագրումը:

ՀՀ ոստիկանության պետ,
ոստիկանության գեներալ-լեյտենանտ Ա. Սարգսյան